

եւ հագել էր կրօնաւորի երկար զգեստ, կուրծքից մինչեւ ոտները կոճակած, նոյնպէս սեւ գոյնով:

Երբ նայեց դէպի մեզ, նրա երեսի վրայ նշմարոեցաւ մի տեսակ շփոթութիւն, որ շուտով անցաւ: Նրան տեսնելով, Ասլանի գոյնը նոյնպէս փոխուեցաւ: Ի՞նչ էր նշանակում այդ: Հեռաւոր Ասիայում, Մուշի դաշտի մէջ, երկու երոպացիներ հանդիպում են միմեանց, մինը կրօնաւոր, միւսը բժիշկ, եւ երկուսն էլ, փոխանակ ուրախութեամբ միմեանց գրկելու, շփոթւում են, սուկում են, ինչպէս մի մարդ, որ անակնկալ կերպով օձի կամ կարիճի է հանդիպում: Թէ ի՞նչ անցաւ Ասլանի սրտից, այդ եւ կարող էի հասկանալ, բայց կրօնաւորի այլայլուելու պատճառը ինձ մնաց անբացատրելի: Չիցէ՞ թէ նրա համար ծանր էր, որ մի երոպացի մարդ տեսնում էր նրան այդպիսի խուլ տեղերում: Անշուշտ նա Ասլանին երոպացու տեղ կընդունէր, եւ ուրիշ կարծիք տանել չէր կարող:

– Դուք, պարոն, երեւի, Մո՛ւշ էք գնում, – հարցրեց նա կտորատած թուրքերէն լեզուով:

– Այո՛, – պատասխանեց Ասլանը:

– Ուրեմն մենք բաւական տեղ ուղեկից կը լինենք. ես էլ այդ գիւղն եմ գնում: – Նա ցոյց տոեց մի հեռաւոր գիւղ:

Ասլանը սկսեց ֆրանսերէն խօսել նրա հետ: Ես չէի հասկանում, թէ ինչ էին խօսում, միայն նկատում էի, որ կրօնաւորը սաստիկ զոարթացաւ, ուրախ էր, անդադար ժպտում էր եւ աւելի ծիծաղում էր, քան թէ խօսում էր: Նա իսկոյն սկսեց մտերմանալ մեզ հետ. իր ծառային կանգնեցրեց, նրա խուրջինից հանել տոեց մի շիշ կոնեակ, նախ ինքը խմեց, յետոյ մի-մի ֆինջան արաջարկեց մեզ: Նրա ծառան, երեւի, գիտէր իր հայր սուրբի սովորութիւնը, հանեց խուրջինից եւ մի-մի վարունգ տոեց մեզ, ասելով.

– Դա զովացնում է:

Այդ միջոցին մեր ընկեր Արփիարը ոչինչ չէր խօսում. նա միայն ուշադրութեամբ նայում էր կրօնաւորի վրայ: Երեւում էր, որ նա հասկանում էր կրօնաւորի լեզուն, որովհետեւ ես ստեպ տեսնում էի նրա սառն դէմքի վրայ մի տեսակ ցնցումներ, որ խորին զգոանք էին արտայայտում: Չարմանում էի, որ մի այդպիսի հրեշտակը բարկանալ գիտէր: Ես կրկին սկսեցի նայել դէպի Մուշի գեղեցիկ դաշտը: Մի թիզ անմշակ տեղ չէր երեւում: Դէպի ամեն կողմ հասունացած հունձքը ոսկեայ ալիքներով ծածկում էր, ծաւալում էր եւ խորին բերկրանք էր պատճառում: Նայում էի դէպի աջ. երեւում էին՝ Գրգուռ, Նեմրուփի (Նեբրովթ) լեռները, երեւում էին Նեմրուփի ուղտերի քարացած